## Արձանագրություն N 2-3

## ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-26/2 ծածկագրով «Երևանի Վահագն Դավթյանի անվան հ. 37 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

16.06.2026թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահող՝ | Ա. Քոչարյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Հ. Գինովյան |
| | Տ. Կոմիտասյան |
| | Ա. Մարգարյան |
| Հանձնաժողովի քարտուղարի պարտականությունները կատարող՝ | Ն. Հարությունյան |
| Բացակայում էր՝ | |
| Հանձնաժողովի նախագահ՝ | Մ. Աղայանց |

### 1. Գնման ընթացակարգի մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների մասին

------------------------------------------------------------------------------------

(Ա. Քոչարյան)

**1.1 Գնման ընթացակարգի մասնակցի՝ «ԼՈՒՔ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ներկայացված փաստաթղթերի գերակշիռ մասը չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես.**

<u>Հավելված N 1-ի մասով</u>

Մասնակցի կողմից ներկայացված Հավելված N 1-ի ձևաչափը չի համապատասխանում հրավերով հրապարակված Հավելված N 1-ի ձևաչափին:

<u>Աշխատանքային ռեսուրսների մասով</u>

- Մասնակցի կողմից չի ներկայացվել կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ Հավելված N 1.2-ը:

- Մասնագետների կատարած աշխատանքի մասին ներկայացված տեղեկատվությունից (CV) հնարավոր չէ հաշվարկել և գնահատել աշխատակիցների աշխատանքային փորձառությունը:

- Մասնակցի կողմից ճարտարապետի և ճարտարագետ-կոնստրուկտորի մասով չեն ներկայացվել հրավերով պահանջվող լիազորված մարմինների կողմից տրված արտոնագրերը, իսկ նախահաշիվ կազմող և շինարարական աշխատանքների կազմակերպման մասնագետների մասով՝ ԲՈՒՀ–ի կողմից տրված դիպլոմները:

<u>Նմանատիպ պայմանագրերի մասով</u>

Մասնակցի կողմից ներկայացված պայմանագրերը չեն հանդիսանում նմանատիպ:

Նմանատիպ է համարվում IV կամ IV-ից բարձր կատեգորիայի ռիսկայնության աստիճանի հասարակական կամ բնակելի նշանակության օբյեկտի կառուցման կամ վերակառուցման կամ հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումը՝ հրավերով պահանջվող լիցենզիայի և ներդիրների շրջանակներում, որը պետք է ստացած լինի համապատասխան քաղաքաշինական պարզ և համալիր դրական փորձաքննությունների եզրակացությունը:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և **ծանուցել «ԼՈՒՔ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 17.06.2026թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:** Սահմանված ժամկետում շտկումներ ներկայացվելու դեպքում, հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում այն կգնահատվի անբավարար և կմերժվի:

Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-26/2 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղարի պարտականությունները կատարողի tender1@minurban.am էլ. փոստին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

## 2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

---

(Ա. Քոչարյան)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2026 թվականի հունիսի 18-ին ժամը 12:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահող՝ ______________________ Ա. Քոչարյան

Անդամ՝ ______________________ Հ. Գինովյան

______________________ Տ. Կոմիտասյան

______________________ Ա. Մարգարյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղարի պարտականությունները կատարող՝ ______________________ Ն. Հարությունյան